



ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳԿՄԿ ուսումնական մասի 2015-2016 ուստարվա գործունեության

Երևան – 2016 թ.

*2015-2016 ուսումնական տարվա ընթացքում ուսումնական մասն
իրականացրել է հետևյալ աշխատանքները.*

❖ Վերանայվել և վերահաստատվել է կրեդիտային համակարգով ուսումնառության ուղեցույցի և դասընթացների տեղեկագրքի էլեկտրոնային տարբերակը:

❖ Հաշվետու տարում ևս վերանայվել է առկա և հեռակա ուսուցմամբ մագիստրոսի պատրաստման կրթական ծրագրերի ցանկը՝ հաշվի առնելով դրանց արդիականությունը և ուսանողների առաջարկությունները:

❖ Աշնանային և գարնանային կիսամյակներում ամփոփվել են ուսումնական ընդհատած ուսանողների տվյալները:

❖ Աջակցություն է ցուցաբերվել ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթության ԳԿՄԿ մասնագիտությունների կրթական ծրագրերի (մագիստրատուրա) նոր ցանկի ձևավորման գործընթացին:

❖ Մասնակցություն ԳԿՄԿ-ի ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծության կազմման աշխատանքներին՝ մասնավորապես III չափանիշ /Մասնագիտական կրթական ծրագրեր/, ինչպես նաև հավատարմագրման փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման պլան-ժամանակացույցի նախագծի մշակմանը:

❖ Ուսումնական գործընթացները բարելավելու նպատակով ԳԿՄԿ ուսումնական մասի կողմից կազմակերպել, իրականացվել և վերահսկվել են կրթական գործընթացի պարբերական ստուգումներ՝ այդ գործընթացներին առնչվող գործառնությունների շրջանակներում:

❖ Քննաշրջաններին նախորդող ժամանակահատվածներում ուսանողների և դասախոսների շրջանում շարունակվել են բացատրական-մեկնաբանման աշխատանքները քննությունների անցկացման ընթացակարգերի, ուսանողների պարտականությունների և իրավունքների վերաբերյալ:

❖ Ուսման կողմից կազմակերպվել և իրականացվել է ելքային արդյունքների վերահսկման ընթացքը: Ամփոփվել, այնուհետև ԿԳՆ են ներկայացվել ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների նախագահների հաշվետվությունները:

❖ Շարունակվել են ուսանողական շարժի հաշվարկման և վերահսկման աշխատանքները: Ձևակերպվել են ՀՀ զինված ուժերում ծառայելու, ազատման, տեղափոխման, վերականգնման, արտերկիր գործուղման, հիվանդությունների պատճառով տարկետման, ինչպես նաև ուսումնական գործընթացին առնչվող այլ հրամաններ:

❖ Ամփոփվել են ամբիոնների տարեկան հաշվետվությունները:

❖ 2016 թ. պատրաստվել և շրջանավարտներին են հանձնվել 468 դիպլոմ, որոնցից 219-ը՝ առկա ուսուցման համակարգում/15-ը՝ գերազանցության/, 249-ը՝ հեռակա /5-ը՝ գերազանցության/:

❖ Հաշվետու ժամանակահատվածում շարունակվել են ուսումնական պրակտիկաների կազմակերպման, ընտրված հաստատությունների ցանկի վերանայման աշխատանքները: Ուսումնական պլաններում նախատեսված պրակտիկաները իրականացնելու համար Կենտրոնն ունի պայմանագրեր, որոնք

